ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՔՍՈՐԵԱԼՆ ՀՈԳԻ[1]

ԳԵՐԵԶՄԱՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Օրիորդներն

Նորահաս քուրերնիս երկրէս աչուըները դարձուց, ու դէպ 'ի երկինք վերացուց. և երկնից գեղեցկութիւնը տեսնելով, հոն աճապարեց գնաց: Փակենք ուրեմն այն մաքրափայլ բիբերն, և մեր արցունքովը անոր գերեզմանը ցօղենք:

Լացէ՛ք, լացէք, ծաղկունք Սահարոնի, որ ձեր բաժակները Մարեմայ դիմացը կը պարզէիք. լացէք և դուք արմաւենիք, որ զինքը ձեր լայն հովանեացը տակ կ'ընդունէիք. լացէ՛ք զՄարիամ մարգագետինք սիրեցեալ, ուր առաւօտեան դէմ կը վազվզէր. ա՛լ իր հայեցուածքովը ձեր վրայ պիտի չխանդաղատի. ա՛լ չկայ Մարիամ:

Պարն

Աստուած իր ծառաները ահով պատեց: Ո՞վ կրնայ ըսել թէ այս ծագած օրն ալ իմն է, երբ մանկութիւնը կը հնձուի, ու չորցած ծիւղի մը նման զոր հովը կ'առնու կը տանի դաշտին երեսէն: Ո՞վ կրնայ ըսել թէ ուրախանանք, մահն հեռու է: Մահը մինչդեռ առիւծի մը պէս չորս կողմերնիս կը պտըտի, և կը նայի որ որս մը գտնայ ու պատըռտէ: Ո՛վ հոգի իմ, ինչո՞ւ կ'ուշանաս պատրաստելու. ժամանակն որ կ'անցնի՝ կըրնայ զքեզ դատաւորիդ դիմացը տանիլ: Ո՛վ Աստուած, Աստուա՛ծ, քու գթութիւնդ մեռելոց վրայ ըլլայ, ողորմէ՛ վրանին:

Օրիորդներն

Նորահաս քուրերնիս երկրէս աչուըները դարձուց, ու դէպ 'ի երկինք վերացուց. և երկնից գեղեցկութիւնը տեսնելով, հոն աճապարեց գնաց: Փակենք ուրեմն այն մաքրափայլ բիբերն, և մեր արցունքովը անոր գերեզմանը ցօղենք:

Արդէն սպիտակ վարդենւոյն նորածին ծաղկըներն ժողված, ու հարսնութեանդ պսակը հիւսած էինք. արդէն ճակատդ ձգելու ոսկեզարդ քօղը պատրաստուած էր. բայց հիմա այն քօղը մահուան ծածկոյթ եղեր է, և սպիտակ վարդենւոյն նորածին ծաղկըներն գերեզմանիդ վրայ կը թօթափէն իրենց տերևները:

Լացէ՛ք, լացէ՛ք, ծաղկունք Սահարոնի, որ ձեր բաժակները Մարեմայ դիմացը կը պարզէիք. լացէք և դուք արմաւենիք որ զինքը ձեր լայն հովանեայը տակ կ'ընդունէիք. լացէ՛ք զՄարիամ մարգագետինք սիրեցեալ, ուր առաւօտեան դէմ կը վազվզէր, ա՛լ իր հայեցուածքովը ձեր վրայ պիտի չխանդաղատի. ա՛լ չկայ Մարիամ:

Պարն

Սակաւաժամանակեայ է մարդ երկրիս վրայ. և իր պանդխտութեան օրերը կարճատև ու վշտագին են: Ժամանակը զինքն առած անդադար կը մղէ կը տանի, առանց թողլու որ մէյմը ետևը դառնայ նայի:

Ինչպէս սրընթաց գետ մը որ մէյմըն ալ չկրնար տեսնալ իր աղեր ծաղկաւէտ ափունքն, այսպէս ալ մարդս իր վշտալից ընթացիցը մէջ խոտորած, ա՛լ չկրնար իր մանկութեան ատենը կոխած երանաւէտ ճամբաները գտնել: Ո՛վ հոգի իմ, ինչպէս խաղաղութիւն պիտի կարենաս գտնել:

Ուրեմն որուն հոգին որ դառնութեամբ լցուած է, աչուըները առ Աստուած վերցընէ. անոր փառքն ու կարողութիւնը՝ երկինք երկրիս կը պատմէն. իսկ վշտահար՝ բայց յԱստուած համակամութիւն ունեցող մարդը՝ անոր արդարութիւնն ու ողորմութիւնը կը հռչակէ:

[1] Տես երես 91 :

Օրիորդներն

Նորահաս քուրերնիս երկրէս աչուըները դարձուց, ու դէպ՚ի երկինք վերացուց. և երկնից գեղեցկութիւնը տեսնելով, հոն աճապարեց գնաց։ Փակենք ուրեմն այն մաքրափայլ բիբերն, և մեր արցունքովը անոր գերեզմանը ցօղենք։

Ինչպէս թշուառ մօրդ արցունքները պիտի ցամքին. ինքն ալ պիտի չմխիթարուի, վասն զի դու չկաս։ Երբ փեսայացուդ գայ ու զքեզ մեր մէջ փնտռէ ու չգտնէ, ի՞նչ պիտի ըսէ։ Ահ, որչափ արտասուք պիտի թափին վրադ։

Լացէք, լացէք, ծաղկունք Սահարոնի, որ ձեր բաժակները Մարեմայ դիմացը կը պարզէիք. լացէք և դուք արմաւենիք որ զինքը ձեր լուին հովանեայը տակ կ՚ընդունէիք. լացէք զՄարիամ մարգագետինք սիրեցեալ, ուր առաւօտեան դէմ կը վազվազէր, ալ իր հայեցուածքովը ձեր վրայ պիտի չխանդաղատի. ալ չկայ Մարիամ։

Պարն

Երդուընցաւ Աստուած, և իր երդմունքն անդրդուելի է. անոնք որ իրեն կը յուսան, յաւիտեան պիտի ապրին։

Քիչ ատենէն հոգինիս վերանալով մարմիննիս յերկիր պիտի թողու, քիչ ատենէն վերջին օրերուն հրեշտակը իր բոցափայլ թևերը գերեզմանաց վրայ պիտի թօթափէ. մեռելներն իրենց վրայի հողը պիտի պատռեն և նոր հունձքի մը պէս դուրս պիտի ելլեն. գայ պիտի փրկիչը զանոնք հնձելու, և իր հեծանոցաւը ցորենի նման զանոնք որոշելու։ Արդարք յԱստուած յուսան. անոնք յաւիտեան մահ պիտի չտեսնեն։

Պարն ու օրիորդներն

Երդուընցաւ Աստուած, և իր երդմունքն անդրդուելի է, անոնք որ յԱստուած կը յուսան, յաւիտեան պիտի չմեռնին։

Քիչ ատենէն հոգինիս վերանալով մարմիննիս յերկիր պիտի թողու. քիչ ատենէն վերջի օրերուն հրեշտակը իր բոցափայլ թևերը գերեզմանաց վրայ պիտի թօթափէ. մեռելները վրայի հողերնին պիտի պատռեն, և նոր հունձքի մը պէս դուրս պիտի ելլեն. գայ պիտի փրկիչը զանոնք հնձելու, և իր հեծանոցաւը ցորենի նման զանոնք որոշելու։ Արդարք յԱստուած յուսան, անոնք յաւիտեան մահ պիտի չտեսնեն։

Քանի մը աղջկունք

Իր հոգին որսորդին ցանցէն փախչող թռչունի մը պէս թողուց երկիրս ու գնաց։

Տղաքներն

Մարիամ, Մարիամ, ինչու թողուցիր զմեզ։

Երբոր Մարեմայ անունը այս մաքուր ու որոշ ձայները կը կրկնէին, մայրը ոտք ելաւ ու պաղած և տխուր աչուըները չորս դին դարձուց, ու մէյմ՚ ալ յանկարծ պոռաց.

— Աղջիկս, ո՞ւր է աղջիկս։ Աստուած ինծի խոստացեր էր որ զինքը պահէ. և հիմա չկրնար ուզել ինծմէ յափշտակելու զայն. չէ, չէ, պէտք է որ նորէն զինքն ինծի դարձունէ։

Նա Սառա անշարժ մնաց. աչուըները երկինք վերցուց, և ձեռքերը ճակտին զարնելով կանչեց.

— Այո, անոր պիտի երթամ... ինքն իմ ցաւերուս կ՚ողորմի։ Սպասեցէք, ըսաւ այնպիսի ուժգնութեամբ մը, որ զամենքը սարսափեցուց. սպասեցէք, և առանց իմ հրամանիս մէկն ալ չհամարձակի անոր դպչելու։ Վերջը ներքին յանկարծական մղմամբ մը ձգուած, բազմութեան մէջ վազեց, դողդոջուն ու հեղձամղձուկ ձայնով միշտ կրկնելով. Սպասեցէք, սպասեցէք, և ինչուան որ չդառնամ մէկն ալ ճամբայ չելլէ։ Բազմութիւնն առջևը ճամ-

բայ բացաւ և Սառա վազելով անցաւ գնաց։

Մէկն ալ չհամարձակեցաւ զինքը կեցընելու. միայն անհանդարտ աչքով մը ետևէն կը նայէին։ Օ՜առ 'ի վայր բարձրաւանդակէն, ուր որ Իրենց բնակութիւնն էր, վար իջաւ, և դաշտին մէջէն անցնելով, Բահալահեայ լեռն հասաւ, և հոն մեծամեծ ծառոց տեր Ելափիտ Հիւղերուն տակ ծածկուեցաւ։

Իր ան ձայնը, իր կերպարանքը ամենուն վրայ սարսափ մը ձգեց. և երբ աներևոյթ եղաւ՝ ամենուն աչքը պաղած մէկմէկու երես կը նայէին առանց խօսք մը ըսելու։

Կը շարունակուի։

ԾԱՂԿԱՓԱՂ ԵՒՐՈՊԱԿԱՆ

Թէ կերպարանափոխ չինի ամենայն՝ բաց յԱստուծոյ։

Յուշ ածէք միանգամ զյաղթանակս, զտիրապետութիւնս տեղեաց տեղեաց, զշքեղ դաշնադրութիւնս, զՀոխութիս և զդէպս փառաւորս՝ որք կուռ զմիմեանսք ելևել առնէին յամեն անդ առաջինս թագաւորութեանս այսորիկ. Դեռ եւս մօտ առ ձեզ են իրքդ, և ոչ միայն հանդիսատեսք, այլ և բազմաց իսկ 'ի ձէնջ անցեալ է անվեհեր ընդ վիշտս վտանգաց, և հաղորդակից լեալ հասարակաց ցաւոց և փառաց։ Այժ, դրոշմեսցին նոքա յարձանագիրս Դաղղիոյ մինչև ցյետին թոռունս մեր. այլ սակայն և այս ամենայն իբրև զերազ իմն է վաղանցիկ, և կամ որպէս զփայլակն, որ էանց, որոյ և յիշատակ օր քան զօր անկանի 'ի մտաց ձերոց։ Մէջ ապաքէն սուղ է Ճանապարհն զոր մնայ ձեզ կատարել. կարծիցեմք արդեօք, եթէ, ապագայքս քան զանցեալսն առաւել լինիցին հաստատուն։ Մեք երկրագոյնս թուին գոլ՝ ցորչափ հեռի կան, այլ մինչ հասեալք ժամանեն՝ անդէն վաղվաղակի դառնան 'ի չէք, խուսափեալք 'ի մէնջ իբրև 'ի միում վայրկենի։

Հայեցարուք յաշխարհ, զիարդ և կամ յո՞ր վիճակ տեսանէիք զնա յառաջին ամն անդ կենաց ձերոց, և զիարդ այժմ։ Ընթացուք նոր յաջորդեալ ընդ առաջնոյն. նոր անձինք հանդիսացեալ կան 'ի թատեր աշխարհիս. մեծագոյնք յարարուածոց նորանոր գուսանաք յաջողեալ. նորանոր անցք և դէպք, նոր հնարք, նոր կիրք, և դիւցազունք նորանոր յառաքինութիւնս անդ որպէս և 'ի մոլութիւնս, որք գովեստից, թշնամանաց, և կամ հասարակացն կշտամբանաց ընդ լծուլ գտանին։ Համառօտ ասել, նոր իմն աշխարհ տեսանեմք անզգալաբար եկեալ 'ի լոյս, և առանց Ճանաչելոյ ձեր՝ 'ի վերայ նշխարաց առաջնոյն յարուցեալ։

Ընդ ձեզ և իբրև զձեզ անցանէ ամենայն. երագութիւն իմն անհնարին ածեալ ձգէ զամենայն 'ի խորս յաւիտենականութեան. նախնիք մեր յերեկն հորդեցին առաջի մեր զուղին, զնոյն և մեք 'ի վաղուն արագութեամբ առաջի այնոցիկ որոց յաջորդիցեն մեզ։ Որոգին դարք և կերպարանափոխ լինի տեսարան աշխարհիս. աճեալ բազմանանթիւք մեռելոց և կենդանեաց, և յար հանապազ զմիմեանսք յաջորդեն։ Ինկայուն է ամենայն, ամենայն ինչ փոփոխի, ամենայն սպառի, և ամենայն ինչ շինչանի։ Աստուած միայն է որ անփոփոխ մնայ։ Ուղիք դարուց՝ որք ընդքարշ ածեն զմարդիկ՝ առաջի աչաց նորա ընթանան. և տեսանէ նա զտկար մահկանացուս, որ յերագընթաց հեղեղաց աստի վարեալք, յընթացսն անդ թշնամանս և նախատինս նման դնեն, և 'ի վայրկեան այսր զերջանկութեան իւրեանց կամին զվայելս, ընդ որ անցեալ գահավէժ թաւալեալ 'ի ձեռս բարկութեան նորա և վրէժխնդրութեան։

ՄԱՍԻՑԼԵՈՆ